և ի ՆԺԵ (966) թուականին, ի Սևորդիսն շինեցան Հաղբատ և Սանահինն։ Ժ (10) ամաւ յառաջ զՀաղբատ շինեաց կինն Աշոտոյ Խոսրովանոյշ և ապա զՍանահինն, վասն արևշատութեան որդոց իւրեանց Գուրգենայ, Սմբատայ և Գագկայ»[1]։

Մեր հին մատենագիրների միմյանց հակասող այս բոլոր տեղեկություններն իրենց արտահայտությունն են գտել Սանահնի «Քոթուկի» մեջ, որի 30-րդ էջում գրված է, որ Սանահնի Աստվածածին եկեղեցին շինել է Աբաս թագավորը։ Նույն բանը կրկնված է 135 էջում։ Այս նույն էջում գրված է նաև այն մասին, որ Սանահինն ու Հաղբատը շինվել են հայոց ՆԺԵ (415+551 = 966) թվականին, ըստ որում Հաղբատը 10 տարի առաջ է շինվել, քան Սանահինը Աշոտ Բագրատունու կին՝ Խոսրովանուշ թագուհու կողմից՝ իրենց Գուրգեն, Սմբատ և Գագիկ որդիների արևշատության համար։

Նույն «Քոթուկի» մեջ արտագրված՝ Զաքարե ամիրսպասալարի և Իվանե Աթաբակի հրովարտակի մեջ Սանահնի վանքի հիմնարկությունը վերագրված է Լոռիի Կյուրիկյան թագավորության հիմնադիր Գուրգենին և նրա մայր, Աշոտ Ողորմածի կին՝ Խոսրովանուշ թագուհուն։ Այդ հրովարտակի մեջ ասված է, որ նվերներ են հաստատել՝

«Ի Սանահնիս, (որ) շինեալ էր զթագաւորն մեր տիեզերական Գաւրգէն և Խոսրովանուշ թագուհինն» («Քոթուկ», էջ 57)։

«Քոթուկի» 33—35 էջերում նույնպես նկարագրված է Սանահնի և Հաղբատի հիմնարկությունը, բայց այստեղ վանքերի հիմնադիր է ճանաչված Խոսրովանուշ թագուհին, որին կամակցել է իր ամուսին Աշոտ Ողորմածը։

«Յաւուրս սորա ի բազում տեղիս շինեցան կրաւնաւորաց և ճգնաւորականաց տեղիք։ Նաև ի Սեաւորդեաց աշխարհի ևս կամակցութեամբ թագաւորիս, մեծամեծ արդեամբք և բազում ծախիւք բարեպաշտուհւոյս և տիկնաց տիկնայ Խոսրովանոյշ թագուհոյս»։

«Քոթուկի» այս՝ միմյանց հակասող տեղեկությունները արդյունք են տարբեր հեղինակներից (Ասողիկ, Գանձակեցի, Վարդան պատմիչ, ժամանակագրություններ) քաղվածաբար վերցրած վկայությունների, որոնք մի հայտարարի չեն բերվել և միմյանց հետ չեն համաձայնեցվել։

Այս ամենի մեջ խիստ տարօրինակ է և բոլորովին չի հիմնավորված Կիրակոս Գանձակեցու մի տեղեկությունը Սանահնի վանքի հիմնարկության վերաբերյալ։ Ինչպես քիչ առաջ տեսանք, նա Սանահնի հիմնարկությունը վերագրել է 10-րդ դարի կեսերին, Աբասի թագավորության ժամանակներին։ Այնուհետև մոռանալով իր այդ խոսքերը, պատմության մի այլ տեղում նույն վանքի հիմնադրությունը վերագրում է 11-րդ դարի երկրորդ կեսին թագավորող Դավիթ Անհողինի որդի Կյուրիկեին[2]։ Այդ մասին Գանձակեցին գրում է.

«Իբրև ետես Կիւրիկէ արքայ յազգէն Բագրատունեաց որդի Դաւթի, որդւոյ Դերենկանն, որ հիմնարկեաց զհռչակաւոր ուխտսն զՀաղբատ և զՍանահին, եթէ...»[3]։

Գանձակեցու այս տեղեկությունը, կարծում ենք, թյուրիմացության արդյունք է և չի հիմնավորվում որևէ փաստով։

Սանահնի հիմնարկության ճիշտ ժամանակը որոշելու համար վճռական նշանակություն ունեն ժամանակակից երկու փաստաթղթեր, որոնք պահպանվել են Սանահնի «Քոթուկի» մեջ արտագրված լինելու շնորհիվ։ Դրանցից մեկը 979 թ. գրված՝ Սմբատ Տիեզերակալի արքայական հրովարտակն է, որով նա Սանահնում հաստատում է եպիսկոպոսական աթոռ և շնորհում է նրան ընդարձակ վիճակ՝ Գուգարաց աշխարհը, Նիգը, Տաշիրքը մինչև Վրաստանի և Շիրակի սահմանները և Խաչիկ կաթողիկոսի միջոցով Սանահնի վանահայր է նշանակում Եսայիին։ Երկրորդը Բարսեղ Կեսարացու «Յաղագս ճգնաւորաց» ձեռագիր գրքի հիշատակարանն է, գրված հայոց ՆԻԱ (421+551=972) թ. Սանահնի նորաշեն վանքում։

Առաջին փաստաթղթի մեջ Բագրատունի Սմբատ Տիեզերակալ թագավորը գրում է.

[1] Մանր ժամանակագրություններ 13—18-րդ դդ., հատ. 2-րդ, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 501։

[2] Ըստ Ղ. վ. Մովսեսյանի, այս Կյուրիկեն թագավորել է 1048—1089 թվականներին (տե՛ս նրա «Լոռիի Կյուրիկյան թագավորներու պատմությունը», Վիեննա, 1923, էջ 49)։

[3] Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, էջ 91։